հայոց ըմբռնեալ մատնեցի 'ի դատաստան յամանգամայն մեռցի։

ԳԼՈՒԽ ՄԻ.

Ամենայն ինչ և ստացուածք քրէական մեղաւորաց դատապարտեցեալ մեռուցելոց կացցէ և մնասցէ ազատ վասն ժառանգութեան ընտանեաց իւրեանց։

ԳԼՈՒԽ ՄԻԱ.

Արհեստաւորն որում կախէ ոք 'ի կախաղանէ և հանէ գլուխ մահապարտից 'ի անդամէ, անպատիւ լիցի և մի մացի 'ի այլ գործ և 'ի տանէն հայոց հատուցանի ապրուստ նորայ։

ԳԼՈՒԽ ՄԻԲ.

Դատաստան 'ի վերայ քրէական մեղաց կատարեսցի չորս անգամ 'ի մի տարու և 'ի չորս եղանակս տարուն ամենայն անդամ քանի աւուր որ հարկաւոր լիցի դատել 'ի դատաստանի։

Մարտի	21
Յունիսի.	21
Սեպտեմբերի	21
Դեկտեմբերի	21

ԳԼՈՒԽ ՄԻԳ.

Ամենայն քրէական վճռեալ 'ի մահ եթէ